ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/127

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.04.2022թ. թիվ 26/26-1/6616-2022 գրությամբ Գարիկ Սաքանյան Մանվելի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 08.04.2022թ. թիվ ՊՆ/02/1702-2022 գրության հիման վրա, 15.04.2022թ. թիվ 26/26-1/6616-2022 գրությամբ նախաձեռնել է Գարիկ Սաքանյան Մանվելի Ա/Ձ-ին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Գարիկ Սաքանյան Մանվելի Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Գարիկ Սաքանյան Մանվելի Ա/Ձ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Գարիկ Սաքանյան Մանվելի Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/127 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 11:10-ին և 13.06.2022թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.04.2022թ. թիվ ՊՆ/02/1702-2022 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-22-20/1» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև Ա/Ձ Գարիկ Սաքանյան Մանվելի (այսուհետ՝ Մասնակից): Հայտերի գնահատման նիստում գնահատող հանձնաժողովի կողմից Մասնակցի ներկայացրած հայտում արձանագրվել է անհամապատասխանություն՝ հայտով ներկայացված փաստաթղթերում բացակայում է «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-22-20/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված հայտի ապահովումը /ուղարկել է հրավերի Հավելված N 3 լրացված/: ՈՒստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 31.03.2022թ. ծանուցել վերոնշյալ մասնակցին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակիցը չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը: ՈՒստի 04.04.2022թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն

որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, մերժել է Ա/Ձ Գարիկ Սաքանյանի հայտը:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում են Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/127 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 11:10-ին և 13.06.2022թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/127 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/127 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-22-20/1» ծածկագրով գնանշման հարցում (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել Գարիկ Սաքանյան Մանվելի Ա/Ձ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Գարիկ Սաքանյան Մանվելի Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում է հայտի ապահովումը /ուղարկել է հրավերի Հավելված N 3 լրացված/ և որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ 31.03.2022թ. Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության համաձայն՝ 04.04.2022թ. կայացած նիստում արձանագրել է, որ Գարիկ Սաքանյան Մանվելի Ա/Ձ-ի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը և որոշում կայացրել Մասնակցի հայտը մերժելու վերաբերյալ:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.04.2022թ. թիվ 26/26-1/6616-2022 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 08.04.2022թ. թիվ ՊՆ/02/1702-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին

ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետի համաձայն՝ Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է սույն հրավերով սահմանված առավելագույն գնի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

<u>Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը,</u>

<u>ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է</u>, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-22-20/1» ծածկագրով գնանշման հարցում, որին մասնակցության հայտ է ներկայացրել Գարիկ Սաքանյան Մանվելի Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Գարիկ Սաքանյան Մանվելի Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում է հայտի ապահովումը /ուղարկել է հրավերի Հավելված N 3 լրացված/ և որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ 31.03.2022թ. Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության համաձայն՝ 04.04.2022թ. կայացած նիստում արձանագրել է, որ Գարիկ Սաքանյան Մանվելի Ա/Ձ-ի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը և որոշում կայացրել Մասնակցի հայտը մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,</u> ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով <u>ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ սույն գործի փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում արձանագրում եմ, որ Մասնակիցը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է

անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն արձանագրված անհամապատասխանությունը չի շտկել, այսինքն՝ Գարիկ Սաքանյան Մանվելի Ա/Ձ-ն «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-22-20/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.04.2022թ. թիվ 26/26-1/6616-2022 գրությամբ Գարիկ Սաքանյան Մանվելի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Մասնակցին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն հրավալարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**